

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 2/7

ք.Երևան

15 հունվարի 2021թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 08.06.2020թ.-ի թիվ 423253/12 որոշման դեմ «ՍԱԲԱՐԿՈ» ՍՊԸ (ՀՎՀՀ 00160079) տնօրեն Վահրամ Մելիքյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

«ՍԱԲԱՐԿՈ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Մելիքյանի կողմից դիմում-բողոք է բերվել ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 08.06.2020թ.-ի թիվ 423253/12 որոշման (այսուհետ նաև՝ Որոշում) դեմ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի որոշման դեմ գանգատ կարող է տրվել որոշումը նույն օրենսգրքի 283-րդ հոդվածով սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) օրվանից հետո՝ երեսուն օրվա ընթացքում:

ՀՀ հարկային օրենսգրքի 442-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ հարկային մարմնի բողոքարկման հանձնաժողովն ընդունում է հարկ վճարողի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճելու մասին համապատասխան գրավոր որոշում, եթե դիմում-բողոքը ներկայացվել է Օրենսգրքի 441-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետի ավարտից հետո:

Իր հերթին, ՀՀ հարկային օրենսգրքի 440-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հարկային մարմնի պաշտոնատար անձանց այն գործողությունների բողոքարկումը, որոնք կապված են վարչական պատասխանատվության կիրառման հետ, կատարվում է վարչական իրավախախտումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Քննարկվող դեպքում Որոշումը Վահրամ Մելիքյանը ստացել է 27.10.2020թ.-ին, սակայն դրա դեմ բողոքը տրվել է 28.12.2020թ.-ին՝ վերագրյալ իրավանորմով նախատեսված երեսուն օրյա ժամկետի խախտմամբ:

Հետևապես, «ՍԱԲԱՐԿՈ» ՍՊԸ տնօրեն Վահրամ Մելիքյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

«ՍԱԲԱՐԿՈ» ՍՊԸ-ի տնօրեն Վահրամ Մելիքյանի դիմում-բողոքի քննարկման վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝

ՌԱՖԻԿ ՄԱՇԱԴՅԱՆ

